

631.5

Բ - 36

ԱԽՈՀ ՀՈԴ ՓՈՂԿՈՄԱՏ

ԳՅՈՒՂԱՑՆԵՍԵՍԿԵՆ ՀՅԵՐԵՄԵՑԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 13 (104)

Վ. ԲԱՐՁՋՈՎ

ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ՈՒ
ՑԱՆՔԵՐԻ ՆԵԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ



լրացոմեներով ու խմբա-
գրությամբ



ՊԵՏԱԿԱՆ 1930 ՅԵՐԵՎԱՆ

01 MAR 2013

24 SEP 2010

ՀԱԽԱՀ ՀՈՂՖՈՂԿՈՄԱՏ

ԳՅՈՒԳԵՑՆԵՍԵՍԿԵՆ ՀԵՆՐԵՄԵՑՏԵԼԻ ԴՐԵԳԵՐԵՆ

№ 13 (104)

631.5

F-36

Վ. ԲԱՐՁՐՈՎ


ԱՀ

1346

**ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ՈՒ
ՑԱՆՔԵՐԻ ՆՅԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

[REDACTED] լրացումներով ու խմբագրությամբ

[REDACTED]



15204-57

ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐ

Գյուղատնտեսության վերակառուցման, բերքատվության և հացահատիկի արտադրանքի վորակի բարձրացմանը նվիրված ձեռնարկումների սիստեմում առաջին տեղը բռնում է վոչտեսակավոր սերմերը տեսակավորներով փոխարինելու խնդիրը։ Զարգանանշելով խոշոր ներդրումներ և բեկում չառաջացնելով գոյություն ունեցող գյուղացիական տնտեսության մեջ, միայն վոչտեսակավոր՝ սերմերը տեսակավորներով փոխարինելու գործն առաջին խոկ տարին տալիս ե եփփեկտ—միջին հաշվով բերքատվությունը բարձրացնելով $20^0/_{\circ}$ -ով։

Վերոհիշյալ տոկոսը չափազանցված չի, ընդհակառակը, տեսակավորձարկուների բազմաթիվ տվյալները, ինչպես նաև սերմաբուծական աշխատանքների պրակտիկան հաճախ այդ միջինն ավելի բարձր են ցույց տալիս, վորը տեղական սերմերի համեմատությամբ համարվ ե $100^0/_{\circ}$ -ի։ Որինակ, լենինականի գավառում, վորտեղ գարնանացան ցորենը փոխարինվել ե Ուկրայինա-

Հրատ. 1412

Դրառ. № 5746 (բ). Պատվ. № 1093. Տիրաժ 4000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում

յից ստացված «ուկրայինկայով» կամ «կոռպերատորկայով»—մի հեկտարի բերքատվությունը 7-8 ցենտներից բարձրացել է 14—17 ցենտներ, տեղադրել հասել է նաև 20 ցենտների:

Տեսակավոր սերմերի ցանքերի եֆֆեկտավորությունը չի սահմանափակվում միայն բերքատվության բարձրացմամբ։ Նա անդրադառնում է նաև արտադրանքի վորակի վրա—ավելանում է ալյուրի $\frac{1}{10}$ -ը, թիսած հացը։

Այստեղ պիտի նշել ե այն գնահատելի հատկությունները, վոր ունեն սելեկցիոն տեսակներից շատերը,—ինչպես յերաշտադիմացկունությունը, ցրտադիմացկունությունը, հիվանդություններին ու վնասատուներին դիմանալը և այլն։

Ի՞նչն ենք մենք համարում տեսակավոր սերմեր։—Տեսակավոր սերմերն ստացվում են վորոշ հատկության սերմերից՝ ընտրություն կատարելու միջոցով։ Ընտրելով վորոշ հատկություններ ունեցող սերմեր և այդ հատկությունները, այսպես ասած՝ «սելեկցիայի» միջոցով ամրապնդելով, կարելի յէ տեղական վոչ տեսակավոր սերմերից ստանալ ավելի բերքատու և լավագույն հատկություններով հարուստ նոր տեսակներ։ Նոր տեսակներ ստանալու և սկզբումնրանց բազմացնելու գործով զբաղվում են հատուկ գիտական

հիմնարկություններ—փորձնական կամ սելեկցիոն կայանները։ Նոր տեսակների մշակումն ու բազմացումը ԽՍՀՄ հեղափոխությունից հետո յայն ժավալ է ստացել։ Խ. Հայաստանում գոյություն ունեցող միակ սելեկցիոն կայանը հիմնված է 1927 թ.։

Մեր կայանում մշակված տեսակավոր սերմը շատ քիչ է, և հազիվ յերկու տարվա ընթացքում կարելի լիներ տալ ավելին, բան մենք ունենք այժմ։ Մենք գարնանացան և աշնանացան ցորենների տեսակավոր սերմեր ստացել ենք նաև ՈՍՖԽՀ և Ուկրայինայից։

Ի՞նչորիսի ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԱՑՈՒՆԵՐ ՈՒՆԵՆՔ ՄԵՆՔ

Տեղական աշնանացան ցորեններից «զարգա», վոր մշակվում է եղմիածնի սելեկցիոն կայանում։ Տեղական աշնանացան տեսակ է նաև «գալգալոսը», վորն ընտրության միջոցով նույնպես ստացվել է եղմիածնի սելեկցիոն կայանում։ «Ուկրայինկան», վոր մշակվել է Ուկրայինայի հարավային սելեկցիոն կայաններում և մեծ չափերով տարածված է Ուկրայինայում և Հյուսիսային Կովկասում, լավ գնում է մեր նաև գարնանացանի շրջաններում, ինչպես Հենինականի և Սևանի գավառներում։ Տեղական տեսակների

համեմատությամբ, միջին հաշվով, տալիս է 80—100% ավելի բերք: «Կոռպերատորկա»—նույնպես մշակվել է Ուկրայինայի նույն կայաններում և Հայաստանի գարնանացանի շրջաններում,—զլիսավորապես չորային ու անջրդի շրջաններում—նույնպես լավ բերք է տալիս:

Գարնանացան ցորեններից «գալգալոսը» ընտրության միջոցով ստացվել է Եջմիածնի փողձակայանում: «Ցեղիում» III լավ գնում է Եղինականի գավառում և տեղական տեսակներին գերազանցում է 15—20%՝ով:

Գարնանացան գարիներից մենք ունենք «զլաբրում» 026: Սա բերքատու յեւ և իր համելություններով ամենից լավը, ազոտային նյութեր քիչ եւ պարունակում և գործադրելի յեւ գարեջրի արդյունաբերության մեջ:

Ինչպես տեսնում եք, գիտական հիմնարկները - փորձնական և սելեկցիոն կայանները— մշակել են մի շարք հացահատիկային կուլտուրաների փոփոխակներ, վորոնք նկատելի կերպով թե բերքատվությամբ և թե վորակով գերազանցում են տեղական սովորական վոչ տեսակավոր սերմերին: Կայանների մշակած սերմերը բազմացնում են սերմաբուծական համապատասխան կազմակերպությունները — խորհրդարին սերմաբուծական անտեսությունները, կոլ-

անտեսությունները, սերմաբուծական կոռպերատիվ ընկերությունները:

Վերոհիշյալ տեսակավոր սերմերից այս աշնանացանի կամպանիային բազմացնելու համար խորհրդային տնտեսություններին արվելու յեւ—աշնանացան ցորեն «գարդա», իսկ «գալգալոսը», «ուկրայինկան» և «կոռպերատորկան» արվելու յեւ գլուղացիությանը նույն նպատակով:

Տեսակավոր սերմերի մասսայական տարածումը կոլտնտեսություններում և արտադրական ընկերություններում կտարարելու յեւ գաշտավարական միությունը՝ կոնտրակտացիայի միջոցով:

1929 թ. առաջին անգամ հացաֆուրաժային միությունը, այժմ դաշտավարական միությունը, կոնտրակտացիայի յեր յենթարկել տեսակավոր ցանքերը: Այդ թվին ամբողջ Հայաստանում տեսակավոր սերմերի ցանք եր արված 7628 հեկտար, վորից լենինականի գավառում ցանքած եր 6670 հեկտ., Նոր-Բայազետի գավառում՝ 958 հեկտ.: 1930 թ. նախատեսվում է կոնտրակտացիայի յենթարկել 17,000 հեկտ.:

Կոնտրակտացիան այնպիսի մի պայման է, ըստ վորի կոնտրակտանտ ցանքսարարը պարտավորվում է վորոշ տարածություն ցանել վորոշ փոփոխակի սերմերով: Դրան զուգընթաց ցանք-

սարարը պարտավորվում ե մշակության և ցանքի յեղանակների վերաբերմամբ կիրառել միշտը պայմաններ ու պահանջներ, վորպիսին նրան կառաջադրի կոնտրակտացիա կապող հիմնարկությունը. իսկ վերջինս պարտավորվում ե կոնտրակտանու ցանքսարարին մատակարարել տեսակավոր սերմեր, անհրաժեշտ գյուղատնտեսական գործիքներ—ցռւյց տալ ազգունումիական ոգնություն և կոնտրակտանտից, պայմանագրով սահմանված գնով, վերցնել բերքեալ պարանքային ամբողջ յելույթը:

Կոնտրակտացիան ինչ պահանջներ ե առաջադրում ցանքսարարին: Առաջին և հիմնական պայմանն այն ե, վորութաքանչյուր տվյալ տրնտեսության մեջ տվյալ կուլտուրայից ցանվիր վորենիվե մի տեսակը: Այդ պայմանն անհրաժեշտ է, վորպեսզի ցանքերը աղբոտությունից ապահով լինեն: Յեթե տնտեսության մեջ միենույն հողամասի վրա ցանվում են մի քանի տեսակներ, ապա կարելի յե վախենալ, վոր նրանք կարող են այնպիսի սերմեր լինել, վորոնցից այս կամ այն տեսակը կարող ե աղբոտվել:

Սակայն, յեթե նույնիսկ ձշտությամբ ել կատարվի այդ պահանջը, և տվյալ տնտեսության մեջ ցանվի միայն մի տեսակ, ապա այս հանգամանքն ել վերջնականապես ցանքն աղբոտությունը:

Թյունից չի ապահովում, վորովհետև նրա կողքին գտնվում են ուրիշ տնտեսություններ: Յեթե նրանք ցանում են այլ փոփոխակներ, կամ, ավելի վատ՝ ցանում են վոչ տեսակավոր, հասարակ սերմեր, ապա տեսակավոր սերմերի արտերն անխուսափելիորեն աղբոտում են այնպես, ինչպես միենույն տնտեսության մեջ միքանի տեսակներ ցանելու ժամանակ:

Ահա դրա համար ել առաջադրվում ե յերկրորդ հիմնական պահանջը—տեսակավոր ցանիերը պիտի կատարվեն խոռոր, համատարած մասսիվներով: Այսինքն՝ տվյալ շրջանի բոլոր տընտեսությունների ամբողջ արտերը (կոլտնտեսություն, հողհամայնքներ և այն) պիտի ցանվեն տվյալ կուլտուրայի մի տեսակի սերմով: Յեզ վորքան մեծ ե այդ մասսիվի տարածությունը, այնքան նա աղբոտվելուց ապահով ե, այնքան նրա տեսակն ավելի մաքուր ե պահպամ, հեշտ ե ստուգվում նրա տեսակավորության մաքրությունը:

Վորեւ շրջանում նախքան այս կամ այն տեսակը ցանելն անհրաժեշտ ե վորոշել, թե տվյալ շրջանում իսկապես վոր տեսակն ենք ցանելու: Միենույն կուլտուրայի շատ փոփոխակները կան մշակված: Պետք ե ընտրել այն փոփոխակը, վորը տվյալ շրջանի վորոշ հողային-կլիմայական

պայմաններում կտա ամենաբարձր բերքը։ Այլ կերպ ասած՝ պիտի կատարել Տեսակավորման ցրանցում։ Այդ կնշանակի յուրաքանչյուր շրջանի համար նախորդք վորոշել այն փոփոխակը, վորն այդ շրջաննում կտա ամենաբարձր բերքը։

Հստ շրջանների՝ փոփոխակների այդ շրջանացումը կատարվում է այսպես։ — մեր հանրապետության մի շարք վայրերում հիմնվում են փորձահողամասեր։ Այդ հողամասերում ցանում են գլխավորապես տվյալ կուլտուրայի մշակած փոփոխակները և տեղական վոչ տեսակավոր սերմեր։ Յանքերն արվում են տարբեր հողամասերում, սակայն միևնույն վորակի հողերում և միանգամայն միևնույն յեղանակներով։ Յուրաքանչյուր տեսակի բերքը հավաքում են առանձին։ Հետո կշռում են, վորպեսզի պարզեն, թե վոր տեսակն է շատ բերք տվել, վորը՝ քիչ։ Այդ փորձը կրկնելով մի քանի տարի, կարելի յե, տվյալ շրջանի պայմաններին համապատասխան, վորոշել, թե այդ շրջանում վոր փոփոխակն է ավելի շատ բերք տալիս։ Տվյալ շրջանի պայմաններին ավելի համապատասխան փոփոխակը տարեցարի կտա լավ բերք։

Լենինականի փորձադաշտը, և Եջմիածնի սելեկցիոն կայանը յերկրորդ տարին է, վոր այդ փորձը կատարում են։ — առաջինը Լենգավառում

յերկրորդը՝ Յերևանի գավառի տափարակային շրջաններում։

Այդ փորձերի տվյալներով և մասամբ տեղական գյուղատնտեսների դիտողությունների հիման վրա, Լենինականի գավառում արդեն վորոշված են «ուկրայինկալի» և «կոոպերատորկայի» շրջանները։

Այսպես, «Ուկրայինկան» կարող է մշակվել Դյուզենդի, Մոլլա-Գյոկչայի, Համամլուի, Աղբաբայի և Հաջի-Խալիի շրջաններում, իսկ «կոոպերատորկան»՝ Դյուզենդի և Մոլլա-Գյոկչայի անջրդի շրջաններում։

Տեսակավորման այդ շրջանացումն աստիճանաբար պիտի ավելի ճշտորոշվի. ծրագրվում է ավելի ընդարձակել տեսակավոր սերմերի ցանքերի փորձերը։ Այդ փորձերը պիտի դրվեն կոլտնտեսությունների և հողհամահնքների հողերում։ Զափազանց կարենը նշանակություն կունենա այն հանգամանքը, վոր կոլտնտեսությունները, վորոնց հողերի վրա դրվելու յեն մի շարք փորձեր, նրանց նկատմամբ ունեցած իրենց գործնական դիտողությունները հաղորդեյին մոտակա փորձնական կայաններին և այդպիսով նպաստեյին լուծելու հասարակական մեծ շահագրգուռ թյուն ներկայացնող այդ հարցերը։

Այսպիսով, ինթե յուրաքանչյուր տվյալ շըր-

ջանի բոլոր տնտեսությունները—կոչտնտեսությունները, հողհամայնքները, խորհրդային տընտեսությունները—ցանեն տվյալ կուտուրայի վորեւ մի փոփոխակը,—ապա այդ շրջաններից աստիճանաբար դուրս կմղվեն տեղական վոչ տեսակավոր սերմերը, հացահատիկներն աղբից կը մաքրվեն, տեսակավոր սերմերը կբազմացվեն, շատ չեն այլասերվի, շուտով նոր փոփոխակներով փոխարինելու կարիք չի զգացվի, իսկ փոխելն ել, առհասարակ, այնքան հեշտ բան չի:

ՏԵՍԱԿԱՎՈՐ ՑԱՆՔԵՐԻ ԱԳՐՈՄԻՆԻՄՈՒՄԸ

Հետևյալ պահանջը, վոր առաջադրվելու յետեսակավոր ցանքեր անող տնտեսություններին, դա՝ սերմացվի պատրաստմանը, ցանքի համար հողը մշակելուն, ցանելու յեղանակին, ցանքերի խնամքին, հավաքելուն և կալսելուն վերաբերող մի շարք աղբոտեխնիկական պայմանների պարտադիր իրագործումն է: Այդ պայմանների իրագործումը կոչվում է ագրոմինիմում: Բանն այն է, վոր տեսակավոր սելեկցիոն սերմերը միայն այն ժամանակ են լրիվ կերպով հայտնաբերում իրենց լավ հատկությունները և տեղական սերմերի համեմատությամբ բարձր բերք տալիս, յերբ ցանքի ժամանակ կիրառվում են տեղական սե-

լեկցիոն հիմնարկների կողմից փորձով սահմանված վորոշ աղբուտեխնիկական միջոցները:

Առաջին, և միանդամայն պարտադիր միջոցը հանդիսանում է սերմերի՝ կողմնակի խառնուրդներից մայրելլը, ինչպես՝ հողից, դարմանից, մղեղից, աղբից, ոտար սերմերից, որինակ՝ աշորայի սերմերն աշնանացան ցորենի սերմերից, դարու սերմը—դարնանացան ցորենի սերմերից, ինչպես նաև վնասակար խառնուրդներից—գյուղուղից, վիկից, պոչուկից և այլն:

Սերմերը մաքրում են սերմաբուծական տընտեսությունները: Այս տնտեսություններն իրավունք չունեն, առանց սահմանված չափով մաքրելու, տեսակավոր սերմեր բաց թողնել: Յեթե տնտեսությունն ինքն է իր համար սերմացու պատրաստում, ապա նա պիտի վերին աստիճանի խնամքով մաքրի այն: Սերմացուն մաքրում են տրիերներով, վորտեղ միմյանցից զտվում են միևնույն քաշի, սակայն զանազան ձևի բոլոր կողմնակի հատիկները, և վորտեղ վերջնականապես մաղվում դուրս են զալիս բոլոր մանր, նվազ հատիկները:

Բոլոր տնտեսություններն այժմ միանդամայն հնարավորություն ունեն ամենահիմնավոր կերպով տեսակավորելու իրենց սերմացուն, վորովինետե դաշտավարական կոռպերացիան այժմ,

սերմագտման մեքենաների անհրաժեշտ լրիվ կոմպլեկտով, լայն կերպով կազմակերպել ե ինչպես վոչշարժական սերմագտման կետերի, նույնպես և շարժական գումակների ցանց. արիերներով սերմագտումը կատարվում ե հատկապես հաստատված կանոններով և վոչ բարձր գներով: Զքավոր տնտեսությունների համար սերմագտումը կատարվում ե կամ ձրիաբար, կամ արտոնյալ պայմաններով:

Վոչ պակաս կարեռ և պարտադիր միջոց ե հանդիսանում սերմերի ախտահանումը: Այս-ինքն՝ նրան ազատելը սնկային պարագիաներից, գլխավորապես՝ մըրիկից: Լինում են տարիներ, յերբ մըրիկը չափազանց ուժեղ ե զարգանում: Յորենի փոխարեն ստացվում ե սև փոշենը-ման մասսա, վորը վոչ միայն իջեցնում ե բերքի քանակը, այլ և չափազանց վատացնում ե նրա վորակը և համարյա անպետք ե դարձնում ուտեղու համար: Մըրիկով առանձնապես վարակված են լինում աշնանացան և գարնանացան ցորենները: Մըրիկը տարածված ե վոչ ամենուրեք. կան շրջաններ, վորտեղ նա ավելի շատ ե տարածված, և կան շրջաններ, վորտեղ նա բոլորովին չկա:

Տեսակավոր ցանքերի համար հողը պիտի մշակվի ինչպես վոր հարկն ե կամ, ինչպես առում են, կուլտուրական յեղանակներով, այս-

ինքն՝ պիտի գութանալար անել: Գարնանացանի հողի մշակումը գլխավորապես կատարվում ե աշնանից—աշնանավար ե արվում: Այդ վարի նպատակն ե աշնան տաք ժամանակ հողի մեջ կուտակել մննդանյութեր, ավելի մեծ խոնավություն, վորովհետեւ վարած հողի մեջ ձյունը լավ ե պահվում և նա ավելի շատ խոնավություն ե ծծում, և, վերջապես, հեշտանում ե գարնան աշխատանքը, յերբ յուրաքանչյուր որդ թանգ ե: Աշնանավարը, փորձնական հիմնարկների վկայությամբ, խոշոր չափերով բարձրացնում ե բերքը:

Գարնանը, յերբ արգեն կարելի կլինի սկսել դաշտային աշխատանքները, յերբ հողը կփշրվի և վոչ թե կկպչի, հողը պիտի փոցխել յերկաթե փոցխով, վորպեսզի այն չորանալուց պահպանել և հետո, նայած հողի գրության, կատարել նախացանքային մշակումը: Լավ հերկված լինելու գեպում, յեթե հողը շատ չի չորացել, բավական ե արտը ափսեավոր փոցխով փոցխել և ցանել:

Հանձնարարվում ե ցանքն անել շարժացնուվ:

Շարքացանը սերմերը ցանում ե մի հավասարությամբ, սերմացու քիչ ե ծախսում. այսպիսի ցանքի ժամանակ ստացվում են միահավասար ծիլեր: Շարքացան մեքենան ցանելուց առաջ պիտի ամեն տեսակ կեղտից և կողմանակի

աերմերից լավ մաքրել և փորմալինով լվանալ,
վորպեսզի ցանքը մըիկից ապահոված լինի:

Հետո, հացահատիկի ցանքերը պիտի մաքուր պահել—պաշտպանել մոլախոտերից և քաղհանել: Յորենի քաղհանեն անհրաժեշտ եւ: Այսպես, որինակ, գարնանացան ցորենի աճման առաջին շրջանում միանդամայն անթույլատը լին մոլախոտերի զարգանալը:

Սովորաբար յերկու անգամից ավելի չեն քաղհանում. հաճախ՝ մի անգամ մաքուր քաղհանեն ել բավական եւ: Բարեհաջող պայմաններում քաղհանից հետո բույսն այնքան ե աճում ու զարգանում, վոր խեղզում ե մոլախոտերին:

Թմբերն ու մարգերը նույնպես պիտի քաղհանել և թույլ չտար, վոր նրանց վրա մոլախոտեր զարգանան:


Աշնանացան ցորենների նկատմամբ հիմնական ու դիմավոր պայմանը հանդիսանում է ցելի պատրաստելը. իր ժամանակին և լավ պատրաստած ցելը հաստատապես ապահովում է միջակ բերքը: Աշնանացանի համար գարնան վաղ ցելը, այսպես ասած մայիսյան ցելը, մասնավանդ չորային շրջաններում, ահազին նշանակություն ունի: Վարելուց հետո արտը պիտի փոցիսել և վոչ թե առանց փոցիսելու յերկար ժամանակ թողնել, ինչպես այդ ընդունված ե

ահանողալին մի քանի շրջաններում,—վորպեսզի, ինչպես ասում են, նա «այրվի»:

Վարի ամենավերին շերտը պիտի փխրուն դրության պահել, վորպեսզի, այդպիսով նրա մեջ խոնավություն պահպանվի: Յելը պիտի մաքրել նաև մոլախոտերից: Նայած հանգամանքներին, այդ բանն անում են զանազան միջոցներով.—յերկխոփանիներով, բազմախոփանիներով, կուլտիվատորներով, փոցիսերով և այլն: Մինչեւ ցանելը փուխիր գրության և մոլախոտերից մաքուր պահած ցելը—ցելավարի ամբողջ ընթացքում իր մեջ մեծ քանակությամբ կուտակում ե աննդանյութեր և, սովորաբար, ցանելու համար պիտանի յե, յեթենույնիսկ ցանելուց առաջ անձրև չի գալիս:

Աշնանացան ցորենը, ինչպես նաև գարնանացան ցորենը, ցանկալի յե շարքացանով ցանել. դա նպաստում է բույսի միաժամանակ և հավասար աճելուն:

Մի քանի շրջաններում, ինչպես, որինակ լենինականի գավառում, աշնանացան անում են զբաղված ցելի վրա, այսինքն՝ ցանելուց առաջ արտն զբաղված ե լինում վորենե բույսով: Աշնանացան ցորենը, սովորաբար, կարելի յե ցանել արևածաղկից և առաջանակագորենից հետո: Այս գեպքում



15204-52

չափազանց չուշացվի: Դրա համար ել այդ նախորդող կուլտուրաների բերքահավաքը պիտի կատարվի իր ժամանակին և հողն այնպես մշակվի, վորպեսզի նրանցից հետո այն միանդամայն պատրաստ ու պիտանի լինի աշնանացանի համար: Այդ իսկ պատճառով պիտի ընտրել նախորդող կուլտուրաների (այսինքն՝ յեզիպտացորեն կամ արևածագիկ) այն տեսակները, վովնք հասունանում են կարճ ժամանակվա ընթացքում (վաղահաս տեսակները): Որինակ, կարելի յե ցանել յեզիպտացորենի վոչ այնքան բերքառատ այգորիկինք տեսակը, քան տեղական տեսակը, վորը, սակայն, համարյա յերկու շաբաթշուտ և հասունանում:

Մի շաբք շրջաններում աշնանացանի տեսակավոր ցանքերի համար պարարտացումն անհրաժեշտ ե: Աղքատ հողերն անհրաժեշտ ե պարարտացնել գումարդով, իսկ սեահողերի վրա լավ են ազգում հանքային պարարտանյութերը, դրւխավորապես ֆոսֆորները: Առանձնապես ցանկալի յե պարարտացնել աշնանացան ցորենը: Լավ պարարտացրած աշնանացան ցորենը ձմռան ցրտերին լավ ե դիմանում:

Սրանք են այն հիմնական ու գլխավոր ազըստեինիկական միջոցները, վորոնք միանդամայն պարտադիր են տեսակավոր ցանքերը անելիս:

Յեթե այդ պայմանները չեն կիրառվելու, ապա միաք չունի տեսակավոր սերմեր փչացնել, — այդ պարզապես կլինի սերմացուի փչացում և վատնում: Ինքնին հասկանալի յե, վոր ճշտորեն կատարելով սերմերի ու ցանքի պատրաստման, մշակության ու խնամքի վերաբերյալ առանձին պահանջները, անհրաժեշտ ե ճշտորեն փրոշել նաև ցանքի տեղը, այսինքն՝ ցանքը վնր հողում պիտի կատարվի, վնր կուլտուրայից հետո, վորոշել տվյալ տեսակավոր ցանքի տեղը ցանքաշրջանառության մեջ: Դրանից կախված ե և բերքի մեծությունը և՛ տեսակավոր ցանքի մաքրությունը: Ցանքաշրջանառության խնդիրը և յուրաքանչյուր կուլտուրայի տեղը ցանքաշրջանառության մեջ վորոշում ե տնտեսության կազմակերպական պլանով, վորը կազմվում ե գյուղատնտեսի մասնակցությամբ:

ՑԱՆՔԵՐԻ ԱՊՐՈՐԱՑԻԱՆ

Բերքը հավաքելուց մի քիչ առաջ անհրաժեշտ ե կազմակերպել ցանքերի, այսպես առած՝ «ապագրոբացիա» կամ հավանություն տալը: Ուստի հատկապես դրա համար պատրաստված գյուղատնտես-ապագրոբացորների միջոցով քնընվում և դիտվում են բոլոր տեսակավոր ցանքերը: Նրանք ցանքերը դիտելիս վորոշ կանոն-

ներով՝ վորոշ հողամասերից վերցնում են բույսերի նմուշներ և կոնտրոլ կայաններում վորոշում, թե վերցրած յուրաքանչյուր նմուշում ավլալ փոփոխակից վորքան բույս կա և վորքան այլ փոփոխակներից և դրա հիման վրա կազմվում ե «ապարոբացիոն» արձանագրություն, վորտեղ ցույց ե տրվում տեսակավորության մաքրության տոկոսը։ Որինակ, յեթե ասված ե «տեսակավորության մաքրությունը 95 %», այդ կնշանակի, վոր 100 բույսից 95-ը տվյալ փոփոխակիցն ե, իսկ 5-ը՝ այլ փոփոխակներից։

Ապահովա-տեսակավոր ցանքերի ապարոբացիալի ժամանակ, այսինքն՝ այնպիսի ցանքերի, վորոնք արվում են վոչ թե հատուկ սերմաբուծական տնտեսություններում բարձրորակ սերմացուներ արտադրելու նպատակով, այլ կոլտնտեսությունների և հողհամայնքների սովորական տնտեսություններում, — այդ ցանքերը բաժանվում են յերեք կարգի՝ 90 % ից և բարձր—այդ ըստ տեսակավորության մաքրության լավագույն կարգն ե, յերկրորդ՝ 90—80 % և, վերջապես, յերրորդ՝ 80 % ից ցածր։

Վերջին տեսակները խոտանվում են և համարվում են վորպես վոչ տեսակավոր ու գնահատված են վորպես սովորական հացահատիկ։ Ապարոբացիայի ժամանակ աղբոտած ցանքեր

հայտնաբերվելու դեպքում այդպիսիները պիտի բոլորովին հնձել վորպեսզի մյուս բոլոր ցանքերն աղբոտությունից ապահովել։ Նայած թե ինչ նպատակի համար և պատրաստվում հացահատիկը, ըստ այնմ ել սահմանվում ե նրա տեսակավորության մաքրության տոկոսությունը Այսպես, յեթե նա պատրաստվում ե բացառապես վորպես սերմացու, ապա սերմացուից 95 % ցածրը խոտանվում ե, վորը և գրվում ե ապարոբացիայի արձանագրության մեջ։ Իսկ յեթե նա պատրաստվում ե պարենասակորման նպատակներով, արտահանության կամ աղալու համար, և կամ խարի նպատակներով, — նրա տեսակավորության մաքրությունը սահմանվում ե 80 %,

Ցանքերն ապարոբացիայի յենթարկելու և քննելու ժամանակ տնտեսությունը պիտի հայտնաբերի ցանքերի ամենալավ մասը և այն վորպես սերմացու իրեն համար թողնի, վորովհետեւ տնտեսությունը չի կարող ամեն տարի սերմացու գնել, այլ ինքը պիտի այն իրեն համար պատրաստի, և միայն այն ժամանակ ստիպված լինի դրսից ձեռք բերելու, յերբ իր սերմացուները կայլասերվեն։ Այսինքն՝ կամ այլ փոփոխակներով սաստիկ կաղբոտվեն, կամ տվյալ փոփոխակը կկորցնի իր արժեքավոր հատկությունները։ Սերմացու ընտրելու համար ամենից

հարմար առիթը հենց ապարոբացիալի ժամանակն է, փորովինետեւ այս դեպքում մանրամասն կերպով քննվում են բոլոր ցանքերը, փորոշվում են ըրանց տեսակավորության մաքրությունը, ընդհանուր դրությունը և յենթադրելիք բերքատվությունը:

Տեսակավոր հացահատիկներ արտադրողի համար ապարոբացիան և արձանագրություն ստանալը տնտեսական խոշոր նշանակություն ունի, փորովինետեւ մթերումների ժամանակ տեսակավոր հացահատիկների համար սահմանվում են բարձր գներ, քան սովորականների: Իսկ հացամթերման կայաններում տեսակավորությունը հաստատող փաստաթուղթ ե հանդիսանում ապարոբացիալի արձանագրությունը, փորը կազմված ե լինում սահմանված բոլոր կանոնների համաձայն:

ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԱՑՈՒՆ ԱՎԵԼԻ ԲԵՐՔԱՏՈՒ ՅԵ ՈՒ ԹԱՆԳ

Տեսակավոր հացահատիկների պետական մթերման գներին, նրանց «տեսակավորության համար», արվում ե այսպես ասած՝ հավելում: Ապրանքատեսակավոր հացահատիկների համար սա հմանված ե յերկու չափի հավելում: $90^0/_{\text{o}}$ -ից բարձր տեսակավորության մաքրության համար սովորական հացահատիկների գներին ավելաց-

վում ե $15^0/_{\text{o}}$, իսկ $80—90^0/_{\text{o}}$ տեսակավոր մաքրության դեպքում սովորական հացահատիկների գների վրա հավելում կատարվում ե $10^0/_{\text{o}}$: Այսպես, ցորենի 1 ո. 30 կոպ. միջին գնի դեպքում տեսակավորության համար հավելում կատարվում է 13—20 կոպ. 10 կիլոգրամին. աշորալի՝ 90 կոպ.—9—13 կոպ., տարեկանին՝ 8—12 կոպ. և այլն: Այսպիսով, մի հեկտարից ստացվում է 5—8 ո. հավելյալ յեկամուտ:

Բացի դրանից, ինչպես վերն ել ցույց տըրվեց, տեսակավոր հացահատիկները հասարակ հացահատիկներից բնույթով բարձր են, իսկ սահմանված միջին նորմայի դիմաց բնույթի յուրաքանչյուր ավելորդ մսխալին ավելացվում է 1 կոպ., հետեւապես տեսակավոր հացահատիկների համար, սովորականների համեմատությամբ, 16 կիլոգրամմին ավելի կստացվի դարձյալ 5—7 կոպեկ:

Սակայն տեսակավոր սերմերի ցանքերի գլխավոր ոգուտը բերքատվության բարձրացումն է: Այսպես, յեթե միջին հաշվով բերքը բարձրանա $20^0/_{\text{o}}$ -ով, այդ, այժմյան ցածր բերքատվության համեմատությամբ, հեկտարից կանի $1^{1/2}$ ցենտներից ավելի, իսկ փորձադաշտերի ստացած բերքի համեմատությամբ, այդ բարձրացումը հեկտարից կլինի արդեն 4—5 ցենտներ:

Այս արդեն այնքան մեծ ոգուտ ե, վորի համար իսկապես արժե սեփական սովորական սերմացուներից անցնել տեսակավոր սերմերի գործադրության, չնայելով վոր տեսակավոր սերմերը թանգ են և նրանց կիրառումը պահանջում է վորոշակագործ:

Տեսակավոր սերմերի գործադրումից մեծ ոգուտ ե ստանում նաև ամբողջ ժողովրդական տնտեսությունը:

Գյուղացիության հիմնական մասսան արդեն լիովին ընդունել ե տեսակավոր սերմերի նշանակությունը: Այժմ պահանջվում ե վոչ թե համոզվել նրանց ոգտակար և ձեռնտու լինելու մեջ, այլ գիւղավորապես կազմակերպել նրանց պլանային բաշխումը:

ՎՐՇԵՂԻՑ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍՏԱՆԱԼ ՏԵՍԱԿԱՎՈՐ ՄԵՐՄԵՐ

Մասսայական ցանքեր կատարելու համար տեսակավոր սերմեր կարելի յե ստանալ դաշտավարական կոոպերացիայի ցանցից, վորն իր հերթին այդ սերմերն ստանում ե հատուկ սերմաբուծական կազմակերպություններից—խորհունտեսություններից, կոլտնտեսություններից, սերմաբուծական ընկերություններից, պետական

տեսակավոր ֆոնդից և իր կողմից կոնտրակտացված և ապարոբացիայի յենթարկված տեսակավոր ցանքերի մթերումներից:

Սերմերը տրվում են վոչ թե փողով, այլ բացառապես փոխանակվում են սովորական, վոչ տեսակավոր սերմերի հետ—ցենսներին՝ ցենսները. փողով վճարվում ե տեսակավոր և սովորական սերմացուների գների միջև յեղած տարբերությունը: Փոխանակությունը կատարվում ե միննույն կուլտուրայով: Համենայն դեպք պարհավորման կուլտուրաները խարով, որինակ՝ աշորան կամ ցորենը տարեկանի կամ գարու հետ փոխանակելը կարող ե կատարվել բացառապես համապատասխան մարմինների հատուկ թույլտվությամբ միայն:

Տեսակավոր սերմերն ազգաբնակության տարբեր խմբերին բաց են թողնվում տարբեր պայմաններով: Ավելի արտօնյալ պայմաններ սահմանված են սակավագոր չքավոր ազգաբնակության համար:

Զքավոր տնտեսությունների համար այդ արտօնությունները կարող են սահմանվել հետեւյալ կերպ:

1. Զքավոր տնտեսություններին տեսակավոր սերմերն իցեցրած գներով բաց բողնելու միջոցագի:

2. Զքավոր տնտեսություններին և սակավազոր կոլտնտեսություններին տեսակավոր սերմերն արտօնյալ պայմաններով գնահատելու միջոցով, տարբերությունն անցկացնելով պետության կողմից հատկապես այդ եժանացումը կատարելու համար բաց թողնվող միջոցների հաշվին:

3. Տեսակավոր սերմերի և սովորական սերմերի գների միջև յեղած տարբերության վճարումը մինչև նոր բերքը հետաձգելու միջոցով, կատարելով այդպիսին կոնտրակտացիայի համար բաց թողնվելիք վարկերի հաշվին:

Ցանքերի համար տեսակավոր սերմեր ստանալու համար կոլտնտեսության վարչությունը կամ հողային համայնքը տեսակավոր ցանքերին անցնելու համար պիտի վորոշում հանի: Այս վորոշումը, ինչպես և համայնքի բոլոր անդամների կողմից սովորական սերմացանները հանձնելու վորոշումը, կառավարության վորոշմամբ, հանդիսանում է պարտադիր բոլոր անդամների համար:

Այն շրջաններում, վորտեղ չքավոր տնտեսությունները մասնակի անբերիության պատճառով տեսակավոր սերմերի հետ փոխանակելու համար հասարակ սերմեր չունեն, — այդպիսիներին սերմեր բաց թողնել տեղական անձեռն-

միւելի ֆոնդերից և գյուղացիական փոխադարձ ոգնության ֆոնդերից:

Զքավոր տնտեսություններին, տեսակավոր սերմերի հետ փոխանակելու համար, անձեռնմխելի ֆոնդից սովորական սերմեր բաց թողնելու կատարվում է հողհամայնքի վորոշմամբ և գյուղիսորհրդի հաստատմամբ:

Այսպիսով, փոխանակելության գործառնությունն ինքնին միանգամայն ձեռնտու յե բոլոր տնտեսությունների համար: Փոխանակությունը կատարվում է ցենտրալը—ցենտրով, հետևապես իր ցանքի համար սերմացու պահած տընտեսությունը քանակի մեջ վոչինչ չի կորցնում, իսկ սերմացու չունեցող չքավոր տնտեսություններն ոգնություն կարող են ստանալ անձեռնմխելի ֆոնդից:

Բացի դաշտավարական կոռպերացիայի տրամադրության տակ յեղած սերմացուներից, տեսակավոր սերմեր ստանալու համար կա նաև մի այլ աղբյուր, վորը պիտի ամենալայն կերպով ոգտագործել: Շատ խորհտնտեսություններ, կոլտնտեսություններ, սերմաբուծական ընկերություններ, հողհամայնքներ արդեն ամբողջովին անցել են տեսակավոր ցանքերի: Բերքից նրանք հանձնել են արդեն ապրանքային ավելցուկը, հանձնել են նաև կոնտրակտացիոն պայմանա-

գրով իրենցից հասանելիքը: Պարենավորման համար նրանց մոտ մնում ե բացառապես տեսակավոր հացահատիկը: Նրանք ստիպված են այդ հացահատիկն ամեն որ ծախսել և ամբողջն ել կծախսեն, յեթե փոխանակելու համար նրանց սովորական ցորեն չտրվի. վորպեսզի չթույլատրվի, վոր տեսակավոր հացահատիկը գործադրվի պարենավորման նպատակներով, այլ ողտագործվի իր իսկական նպատակին, անհրաժեշտ ե կազմակերպել այսպես կոչված Ախցյուղյա փոխանակություն:

Դրա համար տեսակավոր ցանքեր չունեցող հողհամայնքը կամ կոլտնտեսությունը, վոր ցանկանում ե իր սովորական սերմերը փոխանակել հարեանխորհունտեսության, կոլտնտեսութ. կամ հողհամայնքի ունեցած տեսակավոր սերմերի հետ,—պետք ե վորոշում կայացնի, վոր ինքը կոնտրակտացիայի կարգով անցնում ե տեսակավոր ցանքերի: Այդ վորոշումը պարտադիր ե հողհամայնքի բոլոր անդամների համար: Այն կոլտնտեսությունները և հողհամայնքները, վորնք տեսակավոր սերմեր ունենալով, վորոշել են արդպիսիք գործադրել պարենավորման ու խարի նպատակներով,—պարտագոր են այդպիսիները փոխարինել նույն կուլտուրայի սովորական սերմերով: Փոխանակությունը կատարվելու յե-

ցենտներին՝ ցենտների հաշվով, հավելյալ կերպով դրամով վճարելով տեսակավոր և սովորական հացահատիկների գների միջև յեղած տարբերությունը: Փոխանակության համար գները սահմանվում են տեսակավոր և սովորական հացահատիկների մթերման համար գորություն ունեցող գներին համապատասխան: Փոխանակության գործառնությունը կազմակերպում ե ստորին արտադրական ընկերությունը, իսկ նրա իրագործման վրա հսկում ե գյուղխորհուրդը:

Միջնորդյա այդ փոխանակությունը կարող է տալ մեծ քանակությամբ լրացուցիչ տեսակավոր սերմացու, դրա համար ել անհրաժեշտ ե նրա լայն կերպով կազմակերպելու վրա մեծ ուշադրություն դարձնել: Այդ գործի նախաձեռնողը պիտի հանդիսանա Տեղական կոռպերատիվ ակտիվը, վորն իր գյուղատնտեսի միջոցով կարող է պարզել, թե վորտեղ են տեսակավոր սերմերը գործադրում պարենավորման նպատակներով, և հետո իր սեփական նախաձեռնությամբ կատարել փոխանակության ամբողջ գործառնությունը:

Պետք ե խիստ զգուշությամբ ստուգել ցանելու համար ստացված տեսակավոր սերմերի վորակը: Սերմաբուծական կազմակերպությունների կողմից բաց թողնված սերմերը պիտի

ստուգվեն փաստաթղթերով—սերտիֆիկատներով կամ կոնտրոլ կայանի վկայականով, վորատեղ պիտի ցուց տրված լինի հատիկի բնույթը՝ աղբօտության չափը, խոնավությունը և տեսակավորությունը։ Բացի դրանից, պիտի ստուգել նաև նրա ծլունակությունը։

ՏԵՍԱԿԱՎՈՐ ՑԱՆՔԵՐԸ ՊԻՏԻ ԱՆԵԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԱՇՏԵՐՈՒՄ

Կոլեկտիվացման այժմյան բուռն զարգացումը, բազմաթիվ խոշոր կոլտնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների ստեղծվելը, ամբողջովին համատարած կոլեկտիվացման անցուծ շրջանները խոշոր չափերով հեշտացնում են տեսակավոր ցանքերի ծրագրային կերպով ընդարձակելը։ Կոլտնտեսություններում ամբողջ հողը կենտրոնացված է մի տեղում, վերացված է հողհեռավորությունը, մուծված է կանոնավոր ցանքսաշրջանառություն, անհրաժեշտ ազդրութիւնիկական պահանջների կիրառմամբ կազմակերպված է ազգոնոմիական ղեկավարությունը։ Ունենալով բարդ մեքենաներ, հեշտ է իր ժամանակին տնտեսորեն կազմակերպել բերքի հավաքելն ու կալսելը, նրա պահպաննելը, մաքրելն ու ամբողջական պարտիաներով լերկաթուղուն հանձնելը։

Դրա համար տեսակավոր ցանքերը, առաջին հերթին, անհրաժեշտ ե ստեղծել համատարած կոլեկտիվացման շրջաններում, մեքենա-տրակտորային կայանների շրջանում, հողաշինարարված խոշոր կոլտնտեսություններում։ Այս տընտեսություններում պիտի ցանքեն ամենալավ տեսակավոր սերմերը, համենայն գեպս $90^{\circ}/\delta$ -ից բարձր տեսակավոր մաքրություն ունեցող սերմերը։ Միևնույն ժամանակ իր ուժի մեջ են նույն խոշոր, համատարած մասսիվներով միաւսակ սերմացվով ցանքեր ստեղծելու խնդիրը։

Խոշոր կոլտնտեսություններում համատարած տեսակավոր ցանքերի հիմք գնելու գեպը քում պիտի ձգտել ստեղծելու տեսակավոր սերմերի սեփական ֆոնդ, վորովհետև չի կարելի ամեն տարի դրսից սերմեր ստանալ։ Այդ բանը բավականին բարդ է ու թանդ, դրա համար յուրաքանչյուր խոշոր տնտեսություն պիտի հոգ տանի կազմակերպելու սեփական սերվարտագրություն։ Այդ ձեռնարկումը պիտի նախատեսվի տնտեսության կազմակերպչական ծրագրով և տեսակավոր ցանքերին պիտի հատկացվեն ամեն տեսակետից բարենպաստ պայմաններում գտընվող հողամասեր։ Այդ հողամասերի բերքը պիտի հավաքվի առանձին և հատուկ խնամքով։ Այդ հողամասերը տեսակավորության մաքրության

տեսակետից ապպրոքացիայի յենթարկելու ժամանակ պիտի առանձին ուշադրությամբ քննվեն։ Կոլտնտեսական-դաշտավարական սիստեմի առաջ խոշոր խնդիրներ են գրված—կազմակերպել հարյուր հազար ցենտներ տեսակավոր սերմերի՝ սովորական սերմերով փոխանակելու գործը։ Այս հսկայական գործը դաշտավարական կոռպերացիան միահնակ տանել չի կարող։ Մասսայական այս կարևոր ձեռնարկումի շուրջը, վորությունը անկասկած է, անհրաժեշտ ե ամենակարճ ժամանակում կենտրոնացնել ամբողջ խորհրդային հասարակայնության ուշադրությունը։ Այս աշխատանքի մեջ պիտի ներգրավել ամբողջ կոռպերատիվ ակտիվը, գյուղական հասարակական կազմակերպությունները, գյուղարհուրդները, կուտրչիջները, փոխոգնության կոմիտեները, կոմյերիտական կազմակերպությունները, դպրոցները։

Տեսակավոր ցանքերին անցնելու խնդիրը քննության առարկա պիտի հանդիսանա չքափորական խմբակներում, զյուղական ժողովերում, գյուղացիական կոնֆերենցիաներում, արտադրական խմբական կոնֆերենցիաներում, շրջանային գյուղատնտեսական սեկցիաներում։ Այդ խնդրով մշտապես պիտի զբաղվի տեղական մամուլը։ Նա

պիտի կրի մշտական և վահ թե առանձին կամպանիաների ընույթ։

Տեսակավոր սերմերի մուծման ծրագրային աշխատանքը, համատարած տեսակավոր ցանքերի ստեղծելն իր ակնհարտնի անհրաժեշտության և շահավետության տեսակետից առանձնապես պիտի գրավի յերիտասարդությունը։ Կոմյերիտամիությունը և գյուղերիտ դպրոցներն այդ գործում ազգությունների պերսոնալի զիսավոր հենարանը պիտի հանդիսանան։

Այդ աշխատանքի լոգունգը պիտի լինի։— «ԿԳԿ-ի կողմից բերքատվության բարձրացման միջոցների մասին դեկրետով սահմանած ժամկետից առաջ բոլոր հիմնական կուլտուրաների սովորական, վոչ տեսակավոր սերմերի լիովին փոխարինումը ըստ շրջանների փորձված, տեսակավոր և բարելաված սերմերով։»

Յեղած բոլոր լավորակ, տեսակավոր սերմերը, մինչև վերջին կիրոգրամը, առաջիկա սերմանման կամպանիային պիտի ողտագործվի վորապես սերմացու։



ՀՀ Ազգային գրադարան



NL0288570

648

16 720

ԳԻՒԾ 5 ԿՈՎ. (1 Մ.)

638-



В. БАРЩОВ

Значение сортовых семян и посевов

Госиздат ССР Армении

Эревань—1930